IX

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՃԻՇԵՑՈՒ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ (XVI Դ.)

Առաջարկվող բնագիրը տարեգրություն չէ բառի նեղ իմաստով, այլ մի քանի տարվա՝ 1531—1534 թթ. շրջանում թուրքերի և պարսիկների հերթական պատերազմների, ասպատակությունների, կոտորածների ու գերեվարումների, սովի ու տարաժամ մահվան, ավերի ու թալանի մի տխուր պատմություն։ Դեպքերը տեղի են ունեցել Վանա լճի շրջակա գավառներում։ Այդ ամենն ամփոփված է հեղինակի ինքնագիր հիշատակարանում։ Բնագրում հեղինակն իր մասին երկու անգամ հիշատակում է նկարագրվող դեպքերին ականատես. «Ես մեղաւոր Յոհաննէս,—գրում է նա,—զայս դառն օրս աչօքս եմ տեսեր»։ Այդ պատճառով էլ մեզ հետաքրքրող տեղեկությունները ականատեսի հավաստի և արժեքավոր վկայություններ են, որոնք հաստատվում են ժամանակակիցների կողմից։

Այս բնագիրն ինքնագիր օրինակից վերցնելով, առաջին անգամ հրատարակել է Գ. Աղանյանցը «Դիւան Հայոց պատմութեան» շարքում[1]։ Հրատարակիչը հեղինակի մասին գրած փոքրիկ ներածականում նշում է, որ Հովհ. Արճիշեցին «Աշակերտել էր նշանաւոր Թովմայ Մեծոփեցուն, որից և սովորել գրչութեան արհեստը»[2]։

Մեզ անհայտ է հրատարակչի աղբյուրը, բայց կարծում ենք, որ դա ճիշտ չէ, որովհետև Թովմա Մեծոփեցին, ինչպես հայտնի է, մահացել է 1446 թ.[3], հետևապես Հովհ. Արճիշեցին վերջինիս մահվան տարում պետք է լիներ առնվազն 10—15 տարեկան, որպեսզի կարողանար աշակերտել նրան, այս դեպքում Հովհ. Արճիշեցու կյանքը 1534 թվին կանցներ հարյուր տարուց, մի բան, որ հազիվ թե հավանական լիներ[4]։

Հովհ. Արճիշեցու մի այլ, թեև փոքրիկ հիշատակարանը և խրատական

---

[1] Գիրք Ժ, էջ 19—30։

[2] Նույն տեղ, էջ ԻԸ։

[3] Տես ներքևում, Գավիթ Բաղիշեցու վկայությունը, էջ 353։ Տես և հմմտ. Գ. Հովսեփյան, «Թ. Մեծոփեցու կյանքը և գործունեությունը», Վաղարշապատ, 1914։

[4] Վերևում մեր ասածը հաստատում է Մատենադարանի № 4746 ձեռագրի հիշատակարանը, որը գրել է մի ուրիշ Հովհաննես, 1457 թ., Արճեշում «...Ցիշեսջիք... այլև զիս զանարժան և զանպիտան գրիչս զՅովանէս անուամբ քահանայ և ոչ գործով, և զերախտավոր ուսուցիչն իմ զսուրբ վարդապետն Թումա մեծ բաբունին և զմարմնաւոր ծնաւղսն իմ՝ զհայրն իմ զՄանգասար և զմայրն իմ զՓաշամէլէք...» (էջ 446բ)։ Ինչպես տեսնում ենք, սա ուրիշ Հովհաննես Արճիշեցի է, տարբեր ծնողների սերունդ, որը եղել է Թ. Մեծոփեցու աշակերտը. հետևապես Գ. Աղանյանցի ասածը պարզ թյուրիմացություն է և չի վերաբերում մեր հեղինակին։

մի ընտաստեղծությունը (Բարոյականը) հրատարակված է դարձյալ «Դիւան»-ում։ Բարոյականի շարունակության մեջ, հիշատակարանում, հեղինակը գրում է, որ իր ծնողներն են մահտեսի Կարապետը և Փարիխանը[1], մինչդեռ հրատարակիչ Գ. Աղանյանցը նույն ներածականում գրում է. «Յովհաննէս քահանայի ծնողներն էին Յակոբ քահանան և Մալչուկ խաթունը»[2]։ Եթե սրանցից երկուսն էլ ճիշտ են, նշանակում է, գործ ունենք երկու տարբեր անձնավորությունների հետ, հետևապես Բարոյականը չի պատկանում մեզ հետաքրքրող բնագրի հեղինակին։ Ի դեպ նշենք, որ հենց նույն ժամանակամիջոցում մեզ հայտնի են նաև ուրիշ Հովհաննես Արճիշեցիներ, որոնց ընդօրինակած ձեռագրերից գտնում ենք մեր Մատենադարանում. օրինակ՝ №№ 962, Մաշտոց, 1530 թ., 6881, Մաշտոց, 1531 թ. 6495, Գանձարան, 1490 թ. և այլն, հնարավոր է, որ սրանցից որևէ մեկը, եթե ոչ բոլորը, նույնանան մեր հեղինակի անձնավորության հետ։

Հրատարակության համար բնագիրը վերցրինք Գ. Աղանյանցի «Դիւան Հայոց պատմութեան» ժողովածուից (գիրք Ժ)։ Ծանոթագրություններում օգտագործել ենք դեպքերին ժամանակակից ուրիշ անձնավորությունների տեղեկությունները։

---

[1] «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Ժ, էջ 29։

[2] Նույն տեղ, էջ ԻԸ։

Դարձեալ աղաչեմ զձեզ սուրբ քահանայք և աստուածասէր 19
ժողովուրդք ոչ ձանձրանայք կարդալով կամ լսելով զգանգատ և
զտապալումն աշխարհաց. ևս առաւել զսաստիկ պատուհասն՝ որ
ի Վան եղև և յիւր բոլորն, զի պարտ է մեզ գծողացս՝ սակաւ
5 մի ճառել զպակասումն աղդաց և զպատուհասն յանցանաց մե-
րոց. ե ձեզ ընթեռնուլ և մեզ մեզաց թողութիւն խնդրել. և ձեզ
խաղաղութիւն հայցել ի բարերարէն, զոր մաղթեմք հանապազ
զմարդասէրն Աստուած, որ զխնդրուածս ձեր կատարէ և զայս
պատուհաս ձեզ տեսնուլ ոչ տայ ամէն։

10 Ի յայս ժամանակս՝ որ հայ թուական ՉՁ 1531 աշխարհաւեր
Ուլամէն ինքնագլուխ դարձաւ ի Թաւրէզ և շատ չարիք գոր-
ծեաց՝ ճանապարհորդ կոտորեաց և թալանեաց և բազում մեծու-
նեայք տուգտնեաց, զի շահ Դահմամն ի Խորասան էր[1]. ե ինքն էր 20
ըէկլարբէկի։ Երբ լսեց զգալ շահին փախուստ առաւ և ամրացաւ
15 ի դղեակն Վանայ. և ձեռք ձգեց ի փաթշահն Հռոմոց[2], թէ «Ես
քեզ հնազանդ եմ և դու ծառայ զարուլ անես. շուտ հեծեալ ուղար-
կես որ զբերդս պահէ. և ես դամ ի քոյ ծառայութիւնդ»։ Զոր
լուեալ խոնդքարն յոյժ ուրախացաւ. և առաքեաց բազում ենգի-
չարի և շատ խալաթ Ուլամին. և իբրև հասան ի Վանայ դաշտն՝
20 ի դեօղն, որ ասի Արտամետ[3] ելելալ գոռոզաբար գնաց ի գէմ
հեծելին և խալաթին. դարձոյց Աստուած զսիրտս իւր հեծելին որ
ի բերդին. յիշեցին զաղ ու հացն շահին. և փակեցին զդուռն
բերդին ի դէմ Ուլամին. և նորին չար խորհուրդ խափանեցաւ,
զի այն էր միտքն՝ որ զէնգիչարիքն ի բերդն դնէր, և ինքն
25 գծովու բոլորս թալանէր, և դերի վարէր. ե քաջութեամբ ի խոնդ-
քարն գնէր։ Երբ զայն տեսան զօրք Հռոմոց՝ որ ամէն բան || 21
Ուլամին սուտ եղև. առեալ զնա իբրև զչար դերի՝ ե տարան ի
խոնդքարն. և նա սակաւ մի ընդունեց. և զշահի բանն հարցաւ.
թէ «Ո՞նց գնանք ի վերայ նորա»։ Եւ նա չարախօսեց զամիր Շա-
30 ռաֆն. թէ «Ամէն չարութիւն ի նմանէ է»։ Եւ նա տուեալ վաթ-
սուն հազար հեծեալ՝ որ եկեալ պաշարեաց զդղեակն Բաղիշու[4].
երբ իմացաւ ամիր Շարաֆն զբերդն ամրացոյց. թողեալ ի մէջն
զորդի Շխամիրն. և ինքն գնաց ի Թավրէզ մօտ ի շահն. և գան-
գատ արար յՈւլամիցն, և ելեալ շահն երթայր ի վերայ. նա
35 լուեալ զգալն նորին փախուստ ի Դիարբէկն. և շահն ի Խլաթայ
ի յետ դարձաւ. և դարձեալ շինեցաւ Բաղէշ, Մուշ և Խլաթ, զի լուան

զգալն Ուլամին և ամենեքեան ցրուեցան. և դարձեալ ժողովեցան. և էր թուական ՉՁԱ 1532։

Եւ դարձեալ միւս ամին մահտարաժամ եղև ի վերայ աշխարհի և բաղում մարդիկ խոցեցան ի հրեշտակացն Աստուծոյ և մեռան. քանի հայր և մայր անորդի եղան և անդուսար և քանի քոյր առանց եղբայր և եղբայր առանց քոյր մնացին. քանի սիրուն հարսն ու փեսայ բաժանեցան. և քանի քոյր ու եղբայր ի մէկ գիշերի մեռան. և ով կարէ պատմել զաղէտ և զկսկիծն ծնողացն և զընտանեացն. սիրելեացն և զբարեկամացն. բայց Աստուծոյ միայն է գիտելի, որ ստեղծ զնոսա. և այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց։ Եւ յորժամ եղև այս պատուհասս՝ նա զայն աչօք տեսաք՝ որ ով ոք փախաւ՝ ապրեցաւ. ըստ բանի մարգարէին, որ հրամայէ, թէ փախիր և թագիր առ ժամանակ մի մինչև անցցէ բարկութիւն տեառն. զի այս երեք ցասումս մի են. հեծելշարժութիւն, || սով և մահ. ի հեծեալէն 22
փախիս կուխալիսիս, ի սովուն գնաս ի լիութիւն ապրիս. ի մահուն փախիս աղատիս։ Ճշմարիտ է ի բնական մահուն մարդն փախչիլ ոչ կարէ. բայց մահտարաժամն պատուհաս է. ես մեղաւոր Յոհաննէս զայս դառն օրս աչոքս եմ տեսեր. և զայս կսկիծս քաշեր. զփախածն ճոխ ի շուռ ակեր. և զոչ փախածն ի հողն աճրոեր։

Եւ դարձեալ ի միւս ամին ՉՁԲ 1533 էր թիւն. առեալ Ուլամէն հեծեալ և եկեալ ի Խիզան. և գնացեալ ամիր Շարաֆն ի վերայ. և պատերազմեցան ի Տաճկոյ դաշտն[5], և ամիր Շարաֆն սպանաւ և հեծեալքն որն սպանաւ, և որն փախեաւ. և Ուլամէն զհետ մտեալ մինչ ի Խլաթ. և սկսաւ ի չարիս՝ շատ սպանեց և թալանեց և բաղում գերիս վարեաց. ասելով «Դուք անցեալ տարի յիսնէ փախեայք և հետ Շարաֆին ի Ղղլպաշն գնացիք»։ Եւ էառ զառ և զաւար և նստեալ ի Թուխայ ջուրն[6] զօրդուն ի տեղն եթող. և սուրայ հեծելով ի լղար արար ի վերայ Վանայ. և նոքա իմացեալ ամրացան ի բերդն. և գնացեալ զօրքն ի յԱմկոյ երկիրն[7] զԱլուր[8] գերի արարին շատ հայ ու տաճկով ի ձեռն անկաւ։ Եւ կամէր որ զԲերկրի ու զԱրճէշ գայր գերեցուցէր. և մեք լուեալ ահաբեկ եղաք. և փախեալ ի Ցերիձոր[9] և յԱլատաղն[10] սակաւ մի ամրացաք, զմահն մոռացաք և զկենդանիքն լայեաք, լալով և ողբով զԱստուած աղաչէաք. և ինքն Քրիստոս աղատեաց. յանկարծ լուաւ թէ ի Թավրիզոյ հեծեալ եկաւ. ելեալ Ուլամէն ի Վանայ և փախեաւ. զի Աստուած խնայեաց զքրիստոնեայքն. շանն ի Խորասան էր և անտէր էաք. և Քրիստոս իւր ժողովուրդն աղատեաց. և զՈւլամի չար խորհուրդն || խափանեաց և գնաց դարձեալ ի Թուխայ ջուրն. և սակաւ մի գերի աղատեաց աղաչանօք 23
տանուտէրանց, և առ զառ և զաւար և գնաց քաջութեամբ ի Դիարբէկն. զի զամիր Շարաֆն առեալ էր և զխոնդքարի սիրտն ուրախացուցեալ. և այնչափ չարիք գործեաց, որ չեմ բաւական ճառել. զի շատք ի գերելոցն ի Ցալթուն քօփրուն[11] ի վայր վաթեցան[12] ի չարութենէ զօրացն. և ի պղծութենէ էնգիչարեացն. և այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց։ Եւ

դարձեալ ասէ գիրն, թէ մեղք մեր խնդիր գտան և բարկութիւն
Աստուծոյ առ մեզ բերին. մեր մեղքն յուղարկեց զՈւլամէն, որ
էառ զխոնդքարն ի միւս առին և երեր ի վերայ շահին բաղում
հեծելով և անթիւ արապով, թօփով և զարպաղանգով և վաթսուն
5 հազար թրւանդչով, զոր մարդ ոչ կարէ պատմել զնորին թագա-
ւորութիւնն, թէ որպէ՞ս և կամ զիարդ ոսկին և արծաթ զոր միսէին
այնչափ էր, և գնացեալ առին զշահանիստ քաղաքն՝ որ է Թավ-
րէզ, և սփռեալ տարածեաց զզօրսն իւր ի չորս կողմն. աւերեցին
զրաղում քաղաքս աւարաւ և գերութեամբ։ Եւ լուեալ շահ Դահմա-
10 նին զգալ խոնդքարին, և ելեալ ի Խորասանայ ի լղար, և եկեալ
ի Դարդաղին[13]. և տեսեալ զրազմութիւն Հոռմոց հեծելին՝ զար-
մացաւ և ասաց, թէ «Զդոցա ոտքն ու ձեռքն կապեն մեք յամիս
մի չեմք կարեր ի սուր քարշել. Թող թէ կուռոզ, միայն թէ
Աստուած բարկանայ և դոցա պատուհաս տայ»։ Եւ յայնմ գիշերին
15 շատ անձրև եկաւ և սաստիկ ձիւն և ցուրա եղև, և երեք հազար
մարդ մեռաւ ի զօրաց խոնդքարին. և շահն կամք || ունէր, զի 24
յերեք դիմաց ի վերայ զայր։ Մահմադ սուլթան ասն հազար
մարդով ի խոնդքարն գնաց և զթաճն ձգեց և շատք ի զօրաց շա-
հին խօսք էին տուեր Ուլամին ի փախուստ գնաց դէպի Խորա-
20 սան, և խոնդքարն ի յետ դարձաւ և գնաց ի Բաղդատ. և զՈւլա-
մէն եթող ի Թավրէզ. շահն լուաւ զՄնալն Ուլամին շուտ ի վերայ
դարձաւ. և նա լուաւ զգալ շահին փախաւ ի Թավրիզոյ և ամ-
բացաւ ի Վանայ բերդն. և Մահմատ սուլթան ի Ցարծկէ փա-
խուստ գնաց ի Թավրիզոյ. և լուեալ շահին ի Վան լինելն զաշ-
25 խարհաւեր Ուլամին, շուտ ի վերայ հասաւ. և պաշարեաց զքա-
ղաքն և զբերդն, և ի յուժ ձգել կարմիր գլխին, թողին զքաղաքն
և ամրացան ի բերդն. և ի յառնուլ քաղաքին երեք հարիւր մարդ
ի սուր քարշեցին, և ի յահէ կարմիր գլխին, արեղայ մի և շատ
մարդ ներքև յոտից մնացին և մեռան ի կտրած քարին, և ով
30 կարէ ճառել զպատուհասն եղև. և սկսաւ քակել զքաղաքն և զեր-
կիրն, զի զշէնսն քակէին և մինչև ի լոյս հազար տեղ կրակ վա-
ռէին և զճանապարհներն պահէին, որ մարդ ի բերդէն չիջանէր,
և հեծեալքն ցուրեալ ի չորս դիմաց աւերեցին և անմարդաբնակ
արարին. զՎանայ երկիրն, զՈստանայ և զԱմկուն, և զինչ մարդ
35 որ ի ձեռքն անկանէր այնչափ տանջէին, որ զիւր տեղն և զգեղն
ի խոստ դայր. և տարեալ ի յիւր շէն չարչարէին, մինչ որ ի
խոստ դայր ապարանքն և զայլոցն, և սաստկացաւ պատուհասն,
որև զհրաշալի վանօրայքն և զեկեղեցիքն քակեցին և բաղում
սուրբ նշաններ խաչ և աւետարան, շուրջառ և սուրբ գրեանք ի
40 ձեռս անօրինաց մատնեցան. և անսուրբ ձեռօք || շօշափեցան և 25
դերեցան, յաշխարհէ յաշխարհ մոլորեցան վասն մեղաց մերոց,
որ ասէ գիրն, թէ սկիզբն աւերման ի տանէ իմմէ արարից։ Եւ օր
մի շաւաղաթ արար շահն, թէ «Բաղամսաքին թող իջնու, բան
չեմ ասեր. իմ գլուխս և Ուլամէն դաստուր ետուր». և շատ ժո-
45 ղովուրդք իջան. և դաստուր երետ կարմիր գլուխն, թէ «Գնա-
ցէք ի Մահմտանք[14]». և Ամիրայ բէկին հրաման արար, «թէ մարդ
գիր, որ տանեն ի քո յաշխարհն». և նա այնպէս արար. և միւս

առաւօտին այլ շատք իջին ի բերդէն, և տեսին երկու ենդիչարի
հետ ըռիթին աղքատի կերպիւ, զի ի Բաղդատ կուգնային.
զայն իմացեալ շահին և զամենեսեան ճարակ արար սրի. և կո-
տորեաց յառջև բերդին, և անդ էր տեսանել զաղիողորմ ձայնս
5 նոցին որ աղաղակէին դիմաց բերդին, և հառաչէին, թէ «Օգնե-
ցէք մեզ և թափեցէք զմեզ յանօրէին կարմիր գլխի սրէն»։ Եւ
նոքա դառն լային և գոռային ի բարձր բերդին և օգնել ոչ կա-
րէին, և նոքա լալով ի սուրն մաշէին, և չէր կար մեր բաւական
պատմել զխիղճս նոցին, և այնքն, որ ի Մահմըտանք կուգնա-
10 յին, ի հասանել յոտն Վարագայ եղև սաստիկ ձիւն և բուք, և
վեց հարիւր այր և կին, երիտասարդ և տղայ՝ մեռան ի սարին.
և այնոքիկ որ յառաջն էին գնացեալ յօտար երկիր ամենեքեան
ևս ցաւօք մեռանէին, և ի մէկ դեղն ի Մահմըտանք ութսուն
հոգի մեռան վանեցի, և ընականքն մէկ ոչ պակտսեցաւ, և քանի
15 գնայր պատուհասն սաստկանայր. և սիրտ բռնաւորին ի բար-
կութիւն շարժէր, զի պատուհասն յԱստուծոյ էր. ի յամէն օր տասն
մեծ թոփ ձգէին ի բերդն և զարպազանդին և թաղին թիւ չկայր,
և ծովու բոլորս ի մեծ թոփի ձայնէն կուսասանէր, ապա բերդի
մարդ ոնց կուդիմանայր, աւաղ, զիմ հոգւոյս, թէ քանի մարդ 26
20 մեռաւ որով և թրով, թոփով և թուանկով, սովով և ծարաւով,
ահիւ և դողալով, ի սուրը Սարդսի պահոցէն մինչև ի Համբար-
ձումն[1] տասնուհինգ հազար մարդ մեռան ի բերդն ի քաղաքն
և ի սարն. և շատ պատուհաս դրած կայ ի Լանկ թամուրէն, և
յայլ չար թագաւորաց, բայց քան զայս մարդ չէր լսեր. մենք
25 զամէն աչօք տեսանք. և զկսկիծն քաշեցինք։ Պատուհասն այն էր,
որ մեծատունք որ ի բերդին տուն կայր, որ քսան հոգի ի վերն
ելան, մէկն ի վար չեկաւ, ամէն մեռան. ոչ հացն էր պակաս և
ոչ ջուրն. և ամենայն բարիք առատ էր ի տներ, որ երկու տա-
րի ուտէին, ոչ պարապէր, բայց պատուհաս էր որ պիտի կա-
30 տարէր, փառք ներողութեան Աստուծոյ որ ստեղծ զնոսա. և մատ-
նեաց ի ձեռս անօրինաց։ Եւ դարձեալ այլ պատուհաս, որ երբ ի
բերդէն ի վայր իջան՝ վաղուց գնացած ճանապարհորդներ եկան
ի քաղաքն և շատք մեռան։ Եւ լուաւ խոնդքարն ի Բաղդատայ ի
թավրէզ դիմեց. և ապա լսեց շահն և գնաց բերդէն ի յետ. և
35 մնացեալքն ելեալ ի բերդէն նուաղեալ և նուազեալ. խոց սիրտ
և լալոտ աչօք. որոց հայրն և մայրն մեռեալ և որոց դուստր և
որդին ի սուրն քարշեալ և որոց տունն անցեալ և սիրտք սի-
րելեացն և բարեկամացն խորովեալ. և մարդ հողեղէն ոչ կարէ
ճառել, կամ լեզուով պատմել. բայց աղաչեմ զամենեսեանդ, լիով
40 Աստուած ողորմի ասել նոցա հոգւոյն. թէ յայս կեանքս նեղու-
թեամբ և փորձութեամբ մեռան, նա ի Քրիստոսի յարդար ॥ դա- 27
տաստան պարզերես լինին. և օրհնեալ ձայնին արժանի եղէն որ
ասէ եկայք օրհնեալք հօր իմոյ ժառանգեցէք զանսպառ ուրա-
խութիւնն ամէն։ Մանավանդ զստացող գրոցս զդարբին Շահալն
45 և զեղբայրն զԲրահիմն, և զծնողս նոցին զդարբին Թումէն և զՇա-
մամն և զամենայն արեան մերձաւորքն՝ զկենդանիքն և զհան-
գուցեալքն ամէն։ Եւ զիս անարժան գծողս Յոհաննէս և զիմ հօր-

քուրն Զինախիաշէն, զՋնձելենց հարսն, որ քսան ընտանէօք ի
բերդն ելաւ, մէկ ի վայր չեկաւ. տուն անցաւ, և շատ մուլք ու
մէրէթն անտէր մնաց. Աստուած ողորմի ասացէք առհասարակ
ամենեցուն. և ո՞վ կարդայ այս բաներս և լսէ, Քրիստոս ողորմի
5 ասէ, նա Յիսուս միածին զիւր մեղքն թողու. և զիւր ննջեցելոցն
ոչ յիշէ ամէն։ Եւ դարձեալ զմնացուած չարիքն, որ եղև ի յեր-
կուց թագաւորացն, շահն գնաց ի վերին աշխարհն և խոնդքարն
յետե, մինչև յաշուն ի շուռ եկին. շահն գնայր՝ ու խոնդքարն
յետևն, ոչ պատերազմեցան, և ոչ հաշտեցան, այլ խոնդքարն ի
10 հետ դարձաւ. և շահն զկնի մինչև ի Խոյ. Հռոմոց թագաւորն գնաց
ի Խլաթ, և Ուլամէն ի Վան ի ներս գնաց. մեծ վաշէն որ խոնդ-
քարն ուղարկեց թէ զՎանայ տիրէ, եկաւ տեսաւ աւերն կարմիր
գլխոյն, որ այլ զօրութիւն չէր թողեր թօփն ի բերդն. շուտով փա-
խաւ ի Գաւաշն[16] ի ներս և գնաց ի խոնդքարն, այն լալի ժո-
15 ղովուրդն Վանայ, որ դայս ամենայն չարիք տեսեալ էին, տեսին
որ հռոմեցիք թողին զբերդն ու փախեան, նոքա այլ փութով ելան
զկնի հեծելին և գնացին ի Նոկս դառն արտասուօք, զի զրկեցան
ի յընտանեաց որ ի բերդն մեռան և յապրանաց որ թալան գնաց
և դարձեալ լալուտ աչօք ‖ ելան, որ յօտար երկիր վտարան։ Եւ 28
20 եկեալ շահն ի Վան, և տեսաւ զբերդն անմարդաբնակ և զքա-
ղաքն աւերեալ՝ խիստ ուրախացաւ ի բերդին անկոիւ առնուլն·
և դառն տրտմեցաւ ի վերայ աշխարհի աւերմանն. երդուաւ, թէ
«Յօրէս ի յետ Վանայ շաղաւաթ առնեմ. թէ զիմ որդին են սպա-
ներ՝ այլ բան չեմ ասեր, խուդէն վկայ։ Ապա լսեց թէ խոնդքարն
25 զՈւլամէն երեք փաշայով ի յետ դարձոյց ի Վանայ բերդն, գի-
շերով ի լղար գնաց մինչև ի Կապուտկողն[17] Ուլամէն փախաւ.
զերեք վաշէն հեծելովն ջարդեց և դարձաւ ի Վան և եկեալ ի
Յարճէշ, տեսաւ զի Իբրահիմ փաշէն և Մահմադ սուլթան ի յետ
էին դարձեր. զԱրճիշու բերդի թուանդչիքն հաներ ու զժողովուրդն
30 սուրդուն արեր մինչև յԱրծկէ. և դարձեալ քրիստոնէութիւն արար
էն օրհնեալ փաշէն ու զամէն ազատ արար, որ եկին յաշխարհն
իւրեանց. և ինքն առաւ զխոնդքարն և գնաց ի Դիարբէկն։ Եւ
շահ Դահման առաւ զիւր եղբայրն և զՄանթաշայ սուլթան, որ ի
Յարճիշոյ կողմեր դէմ Հռոմոց թագաւորին գնաց զՍարուսուն[18]
35 թալանեց, զԽլաթ, զՄուշ, և դարձեալ ի Յոստան ի ներս գնաց ի
Թավրէզ։ Եւ մնաց սահրատ ի ձեռն Հռոմոց զօրացն Բաղդատ,
Արծկէ և Աղթամար։ Աւաղ զիմ հոդիս հայրք և եղբայրք, թէ քանի
չարիք գործեցաւ ի յայս հեծեալ շարժութեանցս և ի վրդով-
մանցս, քանի քաղաք և գաւառ աւերեցան և քանի վանօրայք
40 և եկեղեցիք քակտեցան, քանի մեծատունք աղքատացան, և վա-
ճառականք թալանեցան, քանի քրիստոնեայք դերի վարեցան, և
անմեղ տղայքն ի յանօրէնքն խառնեցան և չեմ կարնար գրել չա-
րիքն, զոր ‖ վերին աշխարհն քաշեց ևս առաւել ծովու բոլորս. և 29
այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց։ Որ զաղօթքն
45 և զժամատեղն մոռացեալ ենք. և զամենայն բարեգործութիւնս ‖ 30
միմեանց չար կամենանք և զամենայն չարիս գործենք, զգրոց բան
ատենք և զմեր կամքս կատարենք, հազար վայ մեղաւորիս։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մատենադարանի № 962 Մաշտոցում պահվել է գրիչ Հովհաննես Արճիշեցու (գուցե մեր հեղինակի) 1530 թվի հիշատակարանը, որտեղ հետաքրքիր տեղեկություններ կան այս դեպքերի մասին, բերում ենք հիշատակարանի մեջ հետաքրքրող մասը. «...Գրեցաւ սա ի թըւականիս հայոց ՋՀԹ (1530) ձեռամբ անիմաստ դրչի Ցովհաննիսի ի քաղաքս որ կոչի Արճէշ... ի հայրապետութեան տեառն Զաքարիայի և ի թագաւորութեանն Դահման փաթշահին, որ յայսմ ամի գնացեալ է ի Խորասան ի վերայ Քոչպաշին և ի պարոնութեանս մերոյ Ղուլա (կարելի է կարդալ նաև Ղալա:—Վ. Հ.) սօլթանին, որ նա այլ գնաց ի Խորասան ի պատերազմ և մընացինք անպարոն, զոր լուեալ Ղզիլըրան, թէ «Անտէր է վերին աշխարհն» և ելեալ ի Հոռմաց տանէն. և մեք լուեալ փախըստական եղաք և յաշխարհէ յաշխարհ շրջեցաք. ի Ցարծըկոյ մինչև ի Թավրէզ մեծ վրդովումն եղև Բ (2) ամիս: Եւ Ղզիլըրոտն եկեալ ի Յօստան ի ներս, առաջնորդութեամբն Շարաֆ պարնին, և գնացին ի Ցորմի. Շարաֆ բէկն ի յետ դարձաւ և Ղզիլըրան կացեալ քանիմ օր և խաղաղութիւն արար խաբէութեամբ և յանկարծ դիմեալ ի վերայ Որմու, Օշնու և դագայ արար և զըաղումս դերեցուց և մեք լուեալ ահարեկ եղաք և ապաւինեցաք ի վերին նախախնամութիւնն...» (էջ 382ա—382բ):

2. Իմա, Օսմանյան Թուրքիան:

3. Նաև Արտամատ, այժմ գյուղ Վասպուրականի Վանտոսպ գավառի մեջ, Վանից հարավ-արևմուտք, լճափի մոտ: Թ. Արծրունին, ավանդությամբ, նրա հիմնադրումը վերագրում է Արտաշես Ա-ին: Արտամետի տեղագրության գեղեցիկ նկարագրությունը տե՛ս Թ. Արծրունի «Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917 թ., էջ 97—99:

Վերջինս այն կոչում է քաղաք. «Իսկ զանուն քաղաքին կոչեցին Արտամատ, որ թարգմանեալ ստուգաբանէ Արտաշէսի ձեռակերտ, կամ թէ՝ Արտաշէսի եկք, զի ըստ Պարսից ձայնի Մատ՝ Եկք թարգմանի...» (էջ 99, եթե ստույգ է այդ մեկնությունը, ապա «Մատ»-ը պետք է ուղղել «ամատ»՝ Արտ-ամատ): Մ. Խորենացին «Մարմէտ»-ը ևս մեկնում է այսպես՝ «մար ամատ, որ թարգմանի Մարս եկն» (II, ԽԶ, էջ 173): Հմմտ. նաև «Ամատունիք, որպէս թէ Եկք» (II, Ծէ, էջ 187): Ավանի անունով այս շրջանը կոչել են նաև արտաշեսյան գավառ:

4. Մատենադարանի № 5665 շարականում գրիչ Առաքել աբեղան 1532 թ. հիշատակարանում այդ մասին գրում է. «...այլև գրեցաւ սա ի գաւառն Տարօնոյ ի սուրբ ուխտն Ցովաննու, որ Եղրթա ի վանք կոչի ի դառն և ի դաժան ժամանակի, որ երեկ Ուլամայ սուլթանն ի վերա Բաղիշու բերդին և խաբեաց և բազում աւերք արար երկրի մերում և վասն ծովացեալ մեղաց մերոց դեռ յերերման է երկիրս մեր. և զվերջն ոչ գիտեմ, թէ ինչ լինելոց է...» (էջ 201բ):

5. Ըստ երևույթին պատմական Աղձնիքում:

6. Գետ, որի անունով էլ գյուղը կոչվում է Թուղխ. վերջինս ընկած է Բաղեշից արևելք: Թ. Արծրունին Սմբատ Ա-ի մասին գրում է. «Գնացեալ ընդ եզր ծովուն Բըզնունեաց, ընդ կողմն Ապահունեաց՝ և բանակեցաւ յափն գետոյն, որ իջանէ յԱղձնեաց խոխոմացն» (էջ 381): Նույն գլխի վերնագրում հեղինակն այսպես է գրում. «... և պարտութիւն Սմբատայ յԱհմատայ ի սահմանս Աղձնեաց ի վերայ գետոյն Թուխ կոչեցեալ, որ իջանէ ի ծովն Բզնունեաց» (էջ 380): Հովհ. Դրասխանակերտցին խոսելով նույն դեպքերի մասին, նշում է. «...հազիւ հասանէին (Սմբատ Ա-ի զորքը—Վ. Հ.) ի ջուր ինչ գեղջ մի Թուղխ անուն...» (էջ 175): Այս գյուղը և գետն այժմ կոչվում են Գյոզալդարա, պատմական Աղնվաձոր գավառում:

7. Ամյուկ կամ Ամուկ, Վասպուրականի Առբերանի գավառում, Վանա արևմյան լճափին, անառիկ հրվանդանի վրա, Լիմ կղզու դիմաց։ Թ. Արծրունին հիշում է բերդ. «Աշոտ գնացեալ տալ պատերազմ ընդ ծովեղրեցիսն, որք Ուքմանիկ կոչին, որք ամրանային ի Ցամիւկ անկասկածելի քարանձաւին» (էջ 346)։ Թ. Մեծոփեցին ևս բերդ է նշում (էջ 88), մի տեղ էլ կոչելով Քար Ամկոյ (էջ 110)։

8. Այլուր գյուղն Ա. Դավրիժեցին տեղադրում է Ամուկ գավառի մեջ (էջ 542), գտնվում է Վանա արևելյան լճափին, Մարմեաից հյուսիս, կտուց կղզու դիմաց։ Ա. Դավրիժեցին նկարագրելով 1648 թվի ապրելի 2-ի երկրաշարժի ավերածությունները Վանում և շրջակայքում, կործանված վանքերի թվում հիշում է նաև «Ալերու վանքն» (էջ 402), խոսքն արդյոք վերաբերում է Այլյուր գյուղի վանքերից մեկին։

9. կարծում ենք հեղինակը նկատի ունի այժմյան Երիշատ գյուղը, պատմական Զարիշատը։

10. Իմա, Ծաղկաց լեռները, պատմական Ծաղկոտն գավառում։

11. Անծանոթ վայր։

12. Բնագրում այդպես, սակայն այդ բառի իմաստը՝ վատանալ, տկարանալ, նիհարել (տես Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1945, հա. 4, էջ 305) նշանակությամբ չի համապատասխանում նախադասության մաքին. հեղինակը երևի ուզում է ասել թափեցին։

13. Անծանոթ վայր։

14. Խոշաբ բերդաքաղաքի (Վանից հարավ-արևելք) և գավառի մի այլ անունը, որի մեջ մտնում էր պատմական Մարդաստան գավառը։

15. Այսինքն 1534 թ. հունվարի երկրորդ կեսից (սուրբ Սարգսի պասը կընկնի հունվարի 15-ից—21-ը) մինչև մայիսի 3-ը, համբարձման տոնը։ Այս վկայությունները բառացի հաստատում են այլ ժամանակակիցներ. 1534 թ. Վանում ընդօրինակած մի ձեռագրի հիշատակարանում գրիչ Մարգարեն մանրամասն է խոսում (№ 4764, էջ 248բ—249բ, հրատ. աճս, Ալիշան, «Հայապատում», էջ 501, նույնը տես, ՍՎՁ, Բ, էջ 1172—1174)։ Մեկ ուրիշը գրում է. «Դարձեալ ի ՋԶԴ (1534 թ.) թուին հայոց եղև պատուհաս և բարկութիւն ի վերայ աշխարհիս մեր Վանայ վասն ծովացեալ մեղաց մերոց, որ եկն շահ թահմազ փաթշահն ի յաւուր ձմերայնոյ ի տաւնի սուրբ Սարգսին մինչև ի համբարձումն պաշարեաց և հսարեաց և շատ աւերս արար, փակեցին բազում եկեղեցիս և ապարանս մեծամեծս կործանեցին, աւար ածին զինչս և զստացուածս և անբնակ արարին զաշխարհս ի մարդկանէ և յրուդակէ։ Սպանին բազում քրիստոնեայս և զոմանս դերի վարեցին։ Ապա զբերդն ոչ կարացին առնել, բայց զչարիս զոր գործեցին, ոչ կարէ ոյք լեղուաւ ճառել կամ ընդ գրով արկանել։ Զի մեռան ի հսարն և ի յայլ տեղիս զանձինս ԺԵՌ (15000) և թողին մեզ սուդ անմխիթար և վէրք անողջանելի։ Եւ կամբք տխուր տառապանաւք ի վերայ երկրի և ոչ դառնեմք հանդիստ կենաց մերոց։ Եւ ապա ի սուրբ և յաստուածարնակ ուխտս Վարագ մտին կատաղիքն և արեան ծարաւիքն, ժանտքն և թշնամիքն արդարութեան և յուզեալ քանդելով ուր կայր պահարան սրբութեան զդեստուց զտեալ կողոպտեին զամենայն գրեանս և զաւետարանս, բայց զսուրբ և զաստուածային բուրաստանս և զքաղցրավտակ աղբերս եղեմաբուղխ նառիս, զոր է մեկնեալ վարդապետին Սարգսի, տարեալ էին զսա յերկիրն Արարատեան ի քաղաքն Ցերևան։ Եւ ես Ստեփանոս վարդապետ Վարագեցի հետամուտ եղէ հանդերձ եղբարցս հոգևոր Ստեփաննոս նորընծայ եպիսկոպոսիւ և տէր Յովհաննէս կրօնաւորիւ և Ներսէս փոքր աբեղայիւ։ Եւ հասեալ մտայք ի քաղաքն Ցերևան և տեսեալ զսուրբ գիրքս և ուրախացաք ոչ սակաւ։ Ապա բաղում ջանիւ և աշխատանաւք և դեկանս Ռ. և ՆՃ (1500) ետուք և թափեցաք զսուրբ գիրքս և բերեալ ի ընիկ տեղս իւր ի Վարագ, զի ի Վարագայ էր տարած, և դարձեալ բերաք ի տեղիս իւր և եղայք ի գուն սուրբ Նշանիս անջինջ յիշատակ ինձ և ծնողաց իմոց...» ՄՏՄԾ, զրոց № 11, էջ 45)։ Տաշյանի ցուցակում բերված 1534 թ. մի Մաշտոցի հիշատակարանումժամանակակից գրիչը վերոհիշյալ դեպքերը հաղորդում է ճնշված տրամադրությամբ. «Ի սոյն ամի, յորում էր թիւն Ջ և ՋԴ (1534) սուլթան Սուլէյմանն եկաւ ի վերայ կարմիր գդակին (Գըզըլպաշ) և նա ոչ կարաց զդէմ ունել՝ փախեաւ յարևելս. իսկ նորա հետամուտ եղեալ և էառ զրաղում քաղաքս, ընդ նմին և զվան քաղաք, զամուրն շուայլին Շամիրամայ և գնաց մինչ ի Սո[լ]թանիա, դարձեալ ի յետ գնաց ի Բաղդատ, և զձմեռն անդ եկաց և կարմիր գդակն դարձաւ ի վերա Վանա և Դ (4) ամիս խաբեաց, աւաղ և վայ է դիս հազար բերան, թէ

որքան անձինս կորեան, հաւատացեալ և անհաւատ, դի կարծիս էր, թէ քան զԺԶՌ· (16000) անձինս մեռան, աւելի և ոչ պակաս (ՏՎՇ, էջ 434)։

16. Պատմական Ռշտունիքը։

17. Կապուտկող լեռ, կոչվել է նաև Ընձաքիսաբ, Ընձաքիաբս, գտնվում է Ռշտունիքում, Ընձաք գյուղի հյուսիսային մասում։ Լեռան հարավ-արևելյան լանջի վրա գտնվում է ս. Հակոբի վանքը։

18. Սաբբսու, Արածանիի վտակներից, նաև գավառ, որը գտնվում է Արծկեից հյուսիս, Բատնոցի մոտերքում։ Բնագրում խոսքը վերջինիս մասին է։